# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ապրիլի 2025 թվականի N 549-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ Գ. ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 5/9 ՀԱՍՑԵԻ 05-003-0520-0064 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0,00066 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԽԱՆՈՒԹՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34-րդ կետի, 35-րդ կետի «գ» և «դ» ենթակետերի պահանջները, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N1023-Ն որոշումը, Աշոտ Գերասիմի Դարաբյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մարտունի քաղաք, Գ.Նժդեհի փողոց, թիվ 5/9 հասցեի 05-003-0520-0064 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող 0,00066 հա մակերեսով խառը կառուցապատման գործառնական նշանակության հողամասը և նրա վրա կառուցված 6,48 քմ արտաքին մակերեսով խանութը (ներքին մակերեսը՝ 4,96քմ (կառուցված՝ 2019 թվականին, հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 02092024-05-0032, տրված՝ 2024 թվականի փետրվարի 29-ին) ուղղակի վաճառքով օտարել ինքնակամ կառույցն իրականացրած անձ Աշոտ Գերասիմի Դարաբյանին (ծնված՝ 05.01.1954 թվականին):
2. Աշոտ Գերասիմի Դարաբյանին՝ վճարել խանութի արժեքը՝ 6,48x90000x0,1969=114832 (մեկ հարյուր տասնչորս հազար ութ հարյուր երեսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ և հողամասի արժեքը՝

6,6x4441,8=29316 (քանինը հազար երեք հարյուր տասնվեց) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 144148 (մեկ հարյուր քառասունչորս հազար մեկ հարյուր քառասունութ) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՀՈՎԵՅԱՆ

2025թ. ապրիլի 21
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ապրիլի 2025 թվականի N 550-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-085-304-306 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 101-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Վարդենիկ բնակավայրի բնակիչներ Հովհաննես, Արմինե և Արա Հովեյանների՝ իրենց սեփականության իրավունքով պատկանող հողամասից (անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական № 903676, տրված՝ 2002 թվականի օգոստոսի 26-ին,) հրաժարվելու մասին դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հովհաննես Ազատի Հովեյանին (ծնված՝ 22.08.1966 թվականին), Արմինե Ռաֆիկի Հովեյանին (ծնված՝ 22.01.1973 թվականին) և Արա Հովհաննեսի Հովեյանին (ծնված՝ 09.09.1990 թվականին) սեփականության իրավունքով պատկանող 05-085-304-306 կադաստրային ծածկագրով 0,06 հա մակերեսով վարելահողը ճանաչել համայնքային սեփականություն:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե սույն որոշումից ծագող իրավունքները պետական գրանցման ներկայացնելու համար:
3. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ հողամասերի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի վկայականը ստանալուց հետո համայնքի գույքագրման փաստաթղթերում առաջացող փոփոխությունները ներկայացնել համայնքի ավագանու հաստատմանը:

4. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնին՝ հողամասերն ընդունել Մարտունի համայնքի հողային հաշվեկշիռ:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎԵՅԱՆ

2025թ. ապրիլի 21
ք. Մարտունի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ապրիլի 2025 թվականի N 551-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ, ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ, ԱՐԾՎԱՆԻՍՏ ԲՆԱԿԱՎԱՅՐ, 19-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 6/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՆՇՎԱԾ ՉԱՓԻՑ ՄԻՆՉԵՎ 20 ՏՈԿՈՍ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՓԱՅԼՈՒՆ ՄՈՒՇԵՂԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ, ՍՈՒՍԱՆ ՄԱՐՏԻԿԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ, ԱՆՆԱ ՄԱՐՏԻԿԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ, ՎԱՀՐԱՄ ՄԱՐՏԻԿԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով, նկատի ունենալով, որ տնամերձ հողամասի հատկացված չափից ավել օգտագործվող հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 31-ի N-867 որոշմամբ հաստատված «Կադաստրային քարտեզագրումն ավարտված տարածքներում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների առաջին պետական գրանցման կարգի» 5-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 48-րդ կետը, Փայլուն Մուշեղի Հակոբյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնք, Արծվանիստ բնակավայր, 19-րդ փողոց, թիվ 6/1 հասցեում գտնվող Փայլուն Մուշեղի Հակոբյանին (ծնված՝ 03.08.1967 թվականին), Սուսան Մարտիկի Հակոբյանին (ծնված՝ 01.01.1987 թվականին), Աննա Մարտիկի Հակոբյանին (ծնված՝ 30.07.1988 թվականին) և Վահրամ Մարտիկի Հակոբյանին (ծնված՝ 28.09.1989 թվականին) հատկացված 05-016-0053-0020 կադաստրային

ծածկագրով բնակելի կառուցապատման 0,03292 հա տնամերձ հողատարածքի և տնամերձ հողամասի հատկացման չափից մինչև 20 տոկոս ավել օգտագործվող 0,00852 հա հողամասի նկատմամբ ճանաչել Փայլուն Մուշեղի Հակոբյանի, Սուսան Մարտիկի Հակոբյանի, Աննա Մարտիկի Հակոբյանի և Վահրամ Մարտիկի Հակոբյանի սեփականության իրավունքը (տնամերձ հողամասի հատկացումը 0,6656 հա, գրանցված ունի 0,6412 հա տնամերձ հողամաս):

2. Հողամասի սահմանները որոշվում են որակավորում ունեցող անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծին համապատասխան:
3. Հողամասին տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Արծվանիստ բնակավայր, 19-րդ փողոց, թիվ 6/1 հասցեն:
4. Սույն որոշումից բխող սեփականության իրավունքը ենթակա է գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎԵՅԱՆ

2025թ. ապրիլի 21
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ապրիլի 2025 թվականի N 552-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 3 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N02-Ն հրամանով հաստատված հավելվածի 7-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջը՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի «Մարտունի քաղաքի թիվ 3 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2025 թվականի ապրիլի 22-ին, ժամը 12:30-ին անցկացվող մրցույթի՝ համակարգչի միջոցով ձևավորված մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովի քարտուղար նշանակել Մարտունու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սվետլանա Հովհաննիսյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2025թ. ապրիլի 21
ք. Մարտունի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ապրիլի 2025 թվականի N 553-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԼԻՃՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N02-Ն հրամանով հաստատված հավելվածի 7-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջը՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի «Լիճքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2025 թվականի ապրիլի 22-ին, ժամը 11:00-ին անցկացվող մրցույթի՝ համակարգչի միջոցով ձևավորված մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովի քարտուղար նշանակել Մարտունու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սվետլանա Հովհաննիսյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎՅԱՆ**

2025թ. ապրիլի 21
ք. Մարտունի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ապրիլի 2025 թվականի N 554-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ՎԱՐԴԱՁՈՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ», «ԾՈՎԱՍԱՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ», «ՁՈՐԱԳՅՈՒՂԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ», «ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ», «ԾՈՎԻՆԱՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ», «ԾԱԿՔԱՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի №02-Ն հրամանով հաստատված կարգի 1-ին կետը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի «Վարդաձորի մշակույթի կենտրոն», «Ծովասարի մշակույթի կենտրոն», «Ձորագյուղի մշակույթի կենտրոն», «Ներքին Գետաշենի մշակույթի կենտրոն», «Ծովինարի մշակույթի կենտրոն», «Ծակքարի մշակույթի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոնները զբաղեցնելու համար 2025 թվականի մայիսի 21-ին, ժամը 11:00-ին անցկացնել մրցույթ:
2. Հաստատել մրցույթի հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2025թ. ապրիլի 21
ք. Մարտունի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ապրիլի 2025 թվականի N 555-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԱՆՈՍ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-033-0097-0017 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման հավելվածի 29-րդ կետի 4-րդ ենթակետի և 62-րդ կետի պահանջները՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Երանոս բնակավայր, 2-րդ փողոց, թիվ 89 հասցեում գտնվող 05-033-0097-0017 կադաստրային ծածկագրով գույքը վերահասցեավորել և տրամադրել նոր հասցե՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնք, Երանոս բնակավայր, 2-րդ փողոց, 5-րդ փակուղի, թիվ 1 հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Հ. ՀՈՎՅԱՆ**

2025թ. ապրիլի 22
ք. Մարտունի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ապրիլի 2025 թվականի N 556-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ, ԵՐԱՆՈՍ ԲՆԱԿԱՎԱՅՐ, 22-ՐԴ ՓՈՂՈՑ, 2-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ, ԹԻՎ 14 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՆՇՎԱԾ ՉԱՓԻՑ ՄԻՆՉԵՎ 20 ՏՈԿՈՍ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՕԴԵՍԱ ՎԱՆՈՒՇԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ, ՎԵՆԵՐԱ ԳԱՐԵԳԻՆԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ, ՔՐԻՍՏԻՆԵ ՕԴԵՍԱՅԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ, ԱՐԹՈՒՐԻԿ ՕԴԵՍԱՅԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ, ԼՈՒՍԻՆԵ ՕԴԵՍԱԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ, ԱՆՈՒՇ ՕԴԵՍԱՅԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ԵՎ ԱՐՍԵՆ ՕԴԵՍԱՅԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով, նկատի ունենալով, որ ընդհանուր հողամասի հատկացված չափից ավել օգտագործվող հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 31-ի N-867 որոշմամբ հաստատված «Կադաստրային քարտեզագրումն ավարտված տարածքներում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների առաջին պետական գրանցման կարգի» 5-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 48-րդ կետը, Օդեսա, Վեներա, Արթուրիկ, Լուսինե, Անուշ, Արսեն Գևորգյանների և Քրիստինե Ավետիսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնք, Երանոս բնակավայր, 22-րդ փողոց, 2-րդ նրբանցք, թիվ 14 հասցեում գտնվող, իրավունքը հաստատող փաստաթղթերում նշված չափից մինչև 20 տոկոս ավել

օգտագործվող, Օդեսա Վանուշի Գևորգյանին (ծնված՝ 01.08.1952 թվականին), Վեներա Գարեգինի Գևորգյանին (ծնված՝ 10.05.1953 թվականին), Քրիստինե Օդեսայի Ավետիսյանին (ծնված՝ 23.11.1976 թվականին), Արթուրիկ Օդեսայի Գևորգյանին (ծնված՝ 05.03.1979 թվականին), Լուսինե Օդեսաի Գևորգյանին (ծնված՝ 05.08.1980 թվականին), Անուշ Օդեսայի Գևորգյանին (ծնված՝ 03.11.1983 թվականին) և Արսեն Օդեսայի Գևորգյանին (ծնված՝ 11.03.1987 թվականին) հատկացված 05-033-0151-0010 կադաստրային ծածկագրով բնակելի կառուցապատման 0,0506 հա տնամերձ հողատարածքի նկատմամբ ճանաչել Օդեսա Վանուշի Գևորգյանի, Վեներա Գարեգինի Գևորգյանի, Քրիստինե Օդեսայի Ավետիսյանի, Արթուրիկ Օդեսայի Գևորգյանի, Լուսինե Օդեսաի Գևորգյանի, Անուշ Օդեսայի Գևորգյանի, Արսեն Օդեսայի Գևորգյանի սեփականության իրավունքը (ընդհանուր հողամասի հատկացումը՝ 1,65 հա, գրանցված ունի 1,831 հա, կարող է գրանցվել մինչև 1,98 հա հողամաս):

2. Հողամասի սահմանները որոշվում են որակավորում ունեցող անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծին համապատասխան:
3. Հողամասին տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Երանոս բնակավայր, 22-րդ փողոց, 2-րդ նրբանցք, թիվ 14 հասցեն:
4. Սույն որոշումից բխող սեփականության իրավունքը ենթակա է գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎԵՅԱՆ

2025թ. ապրիլի 22
ք. Մարտունի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ապրիլի 2025 թվականի N 557-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԱՆՈՍ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-033-0097-0025 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման հավելվածի 29-րդ կետի 4-րդ ենթակետի և 62-րդ կետի պահանջները՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Երանոս բնակավայր, 2-րդ փողոց, թիվ 111 հասցեում գտնվող 05-033-0097-0025 կադաստրային ծածկագրով գույքը վերահասցեավորել և տրամադրել նոր հասցե՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնք, Երանոս բնակավայր, 2-րդ փողոց, թիվ 38/1 հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2025թ. ապրիլի 22

ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ապրիլի 2025 թվականի N 558-Ա

## «ԳԵՎՈՐԳ ԽԼՈՅԱՆ ԱԶԱՏԻ» ԱՁ-ԻՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ 2-ՐԴ, 3-ՐԴ ԵՎ 4-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ, ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ, ՔԱՂԱՔ ՄԱՐՏՈՒՆԻ, ԵՐԵՎԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 10 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԱՌԵՎՏՐԻ ԿԵՏՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Մարտունի համայնքի ավագանու 20.12.2024 թվականի N 187-Ն որոշումը՝ **որոշում եմ.**

1. «Գևորգ Խլոյան Ազատի» ԱՁ-ին տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, քաղաք Մարտունի, Երևանյան փողոց, թիվ 10 հասցեում գործող 22 քմ մակերեսով առևտրի կետում ոգելից խմիչքների վաճառքի թույլտվություն 2025 թվականի 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակների համար (թույլտվությունը կցվում է):
2. «Գևորգ Խլոյան Ազատի» անհատ ձեռնարկատիրոջը՝ Մարտունու համայնքապետարանի 900145101060 հաշվի համարին վճարել 18000 (տասնութ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տեղական տուրք:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎԵՅԱՆ

2025թ. ապրիլի 23
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ապրիլի 2025 թվականի N 559-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԾՈՎԱՍԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-036-0075-0004 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 29-րդ կետի 3-րդ ենթակետը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծովասար բնակավայրում գտնվող 05-036-0075-0004 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Ծովասար բնակավայր, 3-րդ փողոց, 6-րդ փակուղի, թիվ 3 հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2025թ. ապրիլի 23
ք. Մարտունի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ապրիլի 2025 թվականի N 560-Ա

## «ՊՎ-ԵՐԵՎԱՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼ, ՄԱՅԻՍ, ՀՈՒՆԻՍ ԱՄԻՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ, ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ, ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔ, Ե.ՉԱՐԵՆՑԻ ՓՈՂՈՑ, 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ, ԹԻՎ 7 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Մարտունի համայնքի ավագանու 20.12.2024 թվականի N187-Ն որոշումը՝ ***որոշում եմ.***

1. «ՊՎ-ԵՐԵՎԱՆ» ՍՊԸ-ին տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Մարտունի քաղաք, Ե. Չարենցի փողոց, 1-ին նրբանցք, թիվ 7 հասցեում գործող առևտրի կետում 42 քմ մակերեսով արտաքին գովազդի տեղադրման թույլտվություն 2025 թվականի ապրիլ, մայիս, հունիս ամիսների համար (թույլտվությունը կցվում է):
2. «ՊՎ-ԵՐԵՎԱՆ» ՍՊԸ-ի տնօրենին՝ Մարտունու համայնքապետարանի 900145101060 հաշվի համարին վճարել 63000 (վաթսուներեք հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տեղական տուրք:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎՅԱՆ**

2025թ. ապրիլի 23
ք. Մարտունի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ապրիլի 2025 թվականի N 561-Ա

## «ԿԱՄՈՒՐՋ» ՈՒՎԿ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼ ԱՄՍՎԱ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 47 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Մարտունի համայնքի ավագանու 20.12.2024 թվականի N 187-Ն որոշումը՝ ***որոշում եմ.***

1. «Կամուրջ» ՈՒՎԿ ՓԲԸ-ին տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի Մյասնիկյան փողոց, թիվ 47 հասցեում գործող սպասարկման կետում 10 քմ մակերեսով արտաքին գովազդի տեղադրման թույլտվություն 2025 թվականի ապրիլ ամսվա համար (թույլտվությունը կցվում է):
2. «Կամուրջ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի տնօրենին՝ Մարտունու համայնքապետարանի 900145101060 հաշվի համարին վճարել 7500 (յոթ հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ տեղական տուրք:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2025թ. ապրիլի 23
ք. Մարտունի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ապրիլի 2025 թվականի N 562-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԳԵՏԱՓՆՅԱ 2-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 22 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-003-0508-0005 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 6,56259 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔԱՆԴԵԼՈՒ (ԱՊԱՄՈՆՏԱԺԵԼՈՒ) ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱԶԱՏԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 41-րդ, 42-րդ, 43-րդ հոդվածների, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի, «բ» կետի, 38-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետի և 36-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշումը և ՀՀ կառավարության 2006 թվականի հունվարի 26-ի թիվ 135-Ն որոշումը, Մարտունու համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Արտյոմ Քոչարյանի 2025 թվականի ապրիլի 23-ի զեկուցագիրը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի Գետափնյա 2-րդ փողոց, թիվ 22 հասցեում գտնվող 05-003-0508-0005 կադաստրային ծածկագրով 6,56259 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա գտնվող շինությունները քանդելու (ապամոնտաժելու) և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ազատելու նպատակով հարուցել վարչական վարույթ:
2. Հարուցված վարչական վարույթի շրջանակներում լսումներ չեն իրականացվում՝ հաշվի առնելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետով սահմանված կարգավորումները:

3. Վարույթի իրականացումը հանձնարարել ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարանի վարչական վարույթի իրականացման հարցերով հանձնաժողովին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎՅԵԱՆ

2025թ. ապրիլի 23
ք. Մարտունի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ապրիլի 2025 թվականի N 563-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՂՀՈՎԻՏ ԲՆԱԿԱՎԱՅՐ, 4-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-027-0064-0018 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՈՒՅՔԻՑ ԲԱԺԱՆՎՈՂ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետը և 33-րդ կետը՝ ***որոշում եմ.***

1.Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Գեղհովիտ բնակավայր, 4-րդ փողոց, թիվ 4 հասցեում գտնվող 05-027-0064-0018 կադաստրային ծածկագրով գույքի բաժանումից առաջացող գույքերին տրամադրել հետևյալ հասցեները՝

0,1880 հա մակերեսով գույքին՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Գեղհովիտ բնակավայր, 4-րդ փողոց, թիվ 4 հասցեն,

0,1721 հա մակերեսով գույքին՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Գեղհովիտ բնակավայր, 4-րդ փողոց, թիվ 4/1 հասցեն:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎՅԱՆ**

2025թ. ապրիլի 25
ք. Մարտունի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ու Մ

25 ապրիլի 2025 թվականի N 564-Ա

## ԹԱԹՈՒԼ ՌԱՖԻԿԻ ՔԵՐՈԲՅԱՆԻ ՀԵՏ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 17-ԻՆ ԿՆՔՎԱԾ ԽՈՏՀԱՐՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի կողմից 2025 թվականի ապրիլի 25-ին տրված թիվ 148 եզրակացությունը և Թաթուլ Քերոբյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Լուծել Թաթուլ Քերոբյանի և Մարտունու համայնքապետարանի միջև 2023 թվականի մայիսի 17-ին կնքված 6,0 հա մակերեսով խոտհարքի վարձակալության պայմանագիրը:
2. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Հարություն Հարությունյանի վրա:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2025թ. ապրիլի 25
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ու Մ

25 ապրիլի 2025 թվականի N 565-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ, ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ, ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ, ՎԵՐԻՆ ԴՈՒՐԱՆ ԹԱՂԱՄԱՍ, 12-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 17 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՆՇՎԱԾ ՉԱՓԻՑ ՄԻՆՉԵՎ 20 ՏՈԿՈՍ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԱՍԻՍ ՊԱՐԳԵՎԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով, նկատի ունենալով, որ հատկացված չափից ավել օգտագործվող հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 31.12.1998 թ. N-867 որոշմամբ հաստատված «Կադաստրային քարտեզագրումն ավարտված տարածքներում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների առաջին պետական գրանցման կարգի» 5-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. №2387-Ն որոշման 48-րդ կետը և Մասիս Պարգևի Համբարձումյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնք, Ներքին Գետաշեն բնակավայր, Ներքին Դուրան թաղամաս, 12-րդ փողոց, թիվ 17 հասցեում գտնվող, Մասիս Պարգևի Համբարձումյանին (ծնված՝ 06.08.1972 թվականին) հատկացված 05-066-0179-0017 կադաստրային ծածկագրով տնամերձ հողամասի հատկացման չափից մինչև 20 տոկոս ավել օգտագործվող 0.01212 հա մակերեսով հողամասի նկատմամբ (հատկացված տնամերձ հողամասի մակերեսը՝ 0.10 հա, փաստացի օգտագործում է 0,11212 հա) ճանաչել Մասիս Պարգևի Համբարձումյանի սեփականության իրավունքը:

2. Հողամասի սահմանները որոշվում են որակավորում ունեցող անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծին համապատասխան:
3. Հողամասին տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Ներքին Գետաշեն բնակավայր, Ներքին Դուրան թաղամաս, 12-րդ փողոց, թիվ 17 հասցեն:
4. 05-066-0179-0017 կադաստրային ծածկագրով հողամասի վրա առկա են 113.78 քմ ընդհանուր մակերեսով ինքնակամ շինություններ՝ կառուցված 2005 և 2019 թվականներին:
5. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎՅԱՆ

2025թ. ապրիլի 25
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ապրիլի 2025 թվականի N 566-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԱՆՈՍ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-033-0097-0081 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման հավելվածի 29-րդ կետի 4-րդ ենթակետի և 62-րդ կետի պահանջները՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Երանոս բնակավայր, 2-րդ փողոց, թիվ 85 հասցեում գտնվող 05-033-0097-0081 կադաստրային ծածկագրով գույքը վերահասցեավորել և տրամադրել նոր հասցե՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնք, Երանոս բնակավայր, 2-րդ փողոց, թիվ 44 հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2025թ. ապրիլի 25
ք. Մարտունի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ապրիլի 2025 թվականի N 567-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԱՆՈՍ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-033-0097-0082 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման հավելվածի 29-րդ կետի 4-րդ ենթակետի և 62-րդ կետի պահանջները՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Երանոս բնակավայր, 2, 85/1 հասցեում գտնվող 05-033-0097-0082 կադաստրային ծածկագրով գույքը վերահասցեավորել և տրամադրել նոր հասցե՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնք, Երանոս բնակավայր, 2-րդ փողոց, թիվ 44/1 հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2025թ. ապրիլի 25
ք. Մարտունի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ապրիլի 2025 թվականի N 568-Ա

## «ՊՎ-ԵՐԵՎԱՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ 2025 ԹՎԱԿԱՆԻ 2-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ, ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ, ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔ, Ե.ՉԱՐԵՆՑԻ ՓՈՂՈՑ, 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ, ԹԻՎ 7 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԱՌԵՎՏՐԻ ԿԵՏՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Մարտունի համայնքի ավագանու 20.12. 2024 թվականի N 187-Ն որոշումը՝ ***որոշում եմ.***

1. «ՊՎ-ԵՐԵՎԱՆ» ՍՊԸ-ին տալ ՀՀ Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Մարտունի քաղաք, Ե.Չարենցի փողոց, 1-ին նրբանցք, թիվ 7 հասցեում գործող 520 քմ մակերեսով առևտրի կետում ոգելից խմիչքների վաճառքի թույլտվություն 2025 թվականի 2-րդ եռամսյակի համար (թույլտվությունը կցվում է):
2. «ՊՎ-ԵՐԵՎԱՆ» ՍՊԸ-ի տնօրենին՝ Մարտունու համայնքապետարանի 900145101060 հաշվի համարին վճարել 23000 (քսաներեք հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տեղական տուրք:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎՀԵՅԱՆ**

2025թ. ապրիլի 25
ք. Մարտունի